ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 մարտի 2021թ. թիվ 113-Ա

«ՄԵԾԱՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 61-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» ենթակետի, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 03.02.2021թ. գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. փետրվարի 27-ի «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 61-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

3/1/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. մարտի 1
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. մարտի 1-ի
թիվ 113-Ա որոշման

«ՄԵԾԱՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ

Հ/հ	*ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ*	*ԳԻՆԸ /ՀՀ դրամ/*
1	18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված անձանց համար **տնային պայմաններում** համաձայն բժշկի նշանակման՝ բուժքրոջ կողմից կատարվող՝	
	ա/ Միջմկանային ներարկումներ	500
	բ/ Ներերակային ներարկումներ	1000
	գ/ Ներերակային կաթիլային ներարկումներ	1500
2	Էլեկտրասրտագրություն	3000
3	Գլյուկոզայի որոշում արյան մեջ	1000
4	Քաղվածք ամբուլատոր քարտից (այդ թվում վարորդական իրավունք ստանալու համար)	3000
5	Սպորտային (18 տարեկանից բարձր) և ազատ ժամանցի կազմակերպման նպատակով հաստատությունների կողմից պահանջվող առողջական վիճակը հավաստող տեղեկանքների տրամադրում /բացառությամբ մասնագիտացված մարզադպրոցների/	4000

ԱՌԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ ԴԻՄՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ

Հ/հ	*ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ*	*ԳԻՆԸ /ՀՀ դրամ/*
1	Արյան ընդհանուր հետազոտություն	1000
2	Արյան մեջ հեմոգլոբինի որոշում	500
3	Գլյուկոզայի որոշումը արյան և մեզի մեջ /յուրաքանչյուրը/	1400
4	Էլեկտրասրտագրություն	4000
5	Բժիշկ մասնագետի խորհրդատվություն	3000
6	Միջմկանային ներարկումներ	500
7	Ներերակային ներարկումներ	1000
8	Ներերակային կաթիլային ներարկումներ	2500
9	Վերքի մշակում և վիրակապում	2000
10	Տնային կանչ	5000

	Հավելյալ մատուցվող ծառայություններ	
11	Այլ մանիպուլյացիաներ (ստամոքսի լվացում, ականջի լվացում)	2000
12	Հիվանդության հետ չկապված քաղվածքների տրամադրում	3000
13	Արխիվային փաստաթղթերի տրամադրում	3000

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

3/1/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ